# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ԵՔ-ԳՀ ԱՊՁԲ-18/63»

ք. Երևան «09» «հունվարի» 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՓԼԵՇ ՈՒՈԹԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են տասը օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5826000 (Հինգ միլիոն ութ հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 25 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից

ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անքաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել

նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15 Սույն պայմանագրով Գնորդի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Նորք-մարաշ, Էրեբունի, Շենգավիթ, Կենտրոն, Դավթաշեն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը:**

**8.16 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՍՓԼԵՇ ՈՒ ՈԹԵՐ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի 1 | ք. Երևան, Գյուլբենկյան փ. 42/6 |
| ՀՎՀՀ 02593108 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| | Հ/Հ 11500184049140 |
| | ՀՎՀՀ 00136902 |
| Գ.Չթրյան ________________ | Ա. Մանուկյան ________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N1
« » «հունվարի» 2018թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/63» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավոր գինը | Ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | Մատակարարման հասցեն | Մատակարարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 41110000/313 | ՍՓԼԵՇ 18.9Լ | SPLASH | ՌՌՌ Հանքային Ջրերի Գործարան ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | **Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի 2018թ. կարիքների համար տարայավորված ջրի ձեռքբերման** Շշալցված խմելու ջուր Խմելու ջուր լրացուցիչ մաքրման փուլ անցած, այն է` -ենթարկված լինի կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրման -ախտահանված լինի ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Ջրի մատակարարումը պետք է կատարվի 18-19լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված բռնակով շշերով /տարաներով/: Անվտանգությունը` ըստ 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | 960 | 105600 | 110 | Ա.Արմենակյան 272 | Ձեռքբերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 41100000/ 328 | ՍՓԼԵՇ 18.9Լ | ՍՓԼԵՇ | ՌՌՌ Հանքային Ջրերի Գործարան ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | **Երևանի Էրեբունի վարչական շրջանի 2018թ. կարիքների համար տարայավորված ջրի ձեռքբերման**<br>Պետք է համապատասխանի խմելու ջրի միջազգային չափանիշներին: Ջուրը շշալցումից առաջ պետք է ենթարկված լինի մանրակրկիտ, բազմաստիճան /5 փուլով/ մաքրման և շշալցված 18,9-19լ. տարողությամբ պոլիէթիլային տարաների մեջ: Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Ջուրը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջարկի 1 աշխատանքային օրվա ընթացքում:Պարտադիր պայման է հանդիսանում մատակարարի հաշվին տրամադրել թվով 20 հատ ջրօգտագործման սարք: | հատ | 960 | 739200 | 770 | Ս.Դավիթ 87 | Ձեռք բերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը |
| 3 | 41100000/ 314 | ՍՓԼԵՇ 18.9Լ | ՍՓԼԵՇ | ՌՌՌ Հանքային Ջրերի Գործարան ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | **Երևանի Շենգավիթ վարչական շրջանի 2018թ. կարիքների համար տարայավորված ջրի ձեռքբերման**<br>Խմելու ջուրը պետք է ոչ միայն որակյալ լինի իր հատկանիշներով, անվտանգ՝ իր քիմիական բաղադրությամբ, վնասակար մանրէների բացակայությամբ, այլ նաև լինի առողջարար, այսինքն օրգանիզմն ապահովի անհրաժեշտ միկրոտարրերով:<br>Ջուրը մանրակրկիտ մաքրման արդյունքում շշալցված լինի պոլիկարբոնատային տարրաների մեջ, որոնք շնորհիվ ապակու պարունակության, թույլ են տալիս ջուրը պահպանել երկար ժամանակ: Սակայն բազմաստիճան մաքրման արդյունքում ջուրը չպետք է կորցնի իր բնական բաղադրությունը: Մեկ շշի ընդհանուր տարողությունը պետք է լինի 18.9 -19 լիտր: | հատ | 960 | 777600 | 810 | Ք. Երևան Գ.Նժդեհի փողոց թիվ 26 | Ձեռք բերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 41100000/333 | ՍՓԼԵՇ 18.9Լ | ՍՓԼԵՇ | ՌՌՌ Հանքային Ջրերի Գործարան ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | **Երևանի Կենտրոն վարչական շրջանի 2018թ. կարիքների համար տարայավորված ջրի ձեռքբերման** Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, շշալցված տարողությամբ պոլիմերային շշերում: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, շշալցված 18.9լ-19լ տարողությամբ պոլիմերային տարաների մեջ:<br><br>Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Մատակարարը պետք է տրամադրի նաև ջրից՝ տաք և սառը վիճակում օգտվելու սարքեր 20 հատ: | հատ | 960 | 921600 | 960 | ՏԵՐՅԱՆ 44 | Ձեռքբերման նախնտրելի ժամկետ սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը |
| 5 | 41100000/332 | ՍՓԼԵՇ 18.9Լ | ՍՓԼԵՇ | ՌՌՌ Հանքային Ջրերի Գործարան ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | **Երևանի Դավթաշեն վարչական շրջանի 2018թ. կարիքների համար տարայավորված ջրի ձեռքբերման** Խմելու ջուր լրացուցիչ մաքրման փուլ անցած, այն է՝<br>- ենթարկված լինի կոշտ մաքրման. ածխային ֆիլտրով եւ ավելի նուրբ ֆիլտրով մաքրման<br>- ախտահանված լինի ուլտրամանուշակագույն ճառագայթներով:<br>Ջրի մատակարարումը պետք է կատարվի 18-19լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված բռնակով շշերով/տարաներով/: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | հատ | 960 | 230400 | 240 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | Ձեռքբերման նախնտրելի ժամկետ սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը |

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավորի գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 6 | 41111100 /303 | Խմելու բնական աղբյուրի ջուր | | | | Խմելու բնական աղբյուրի ջուր լրացուցիչ մաքրման փուլ անցած, այն է՝ -ենթարկված լինի կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրման -ախտահանված լինի ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Ջրի մատակարարումը պետք է կատարվի 18-19լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված բռնակով շշերով /տարաներով/: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, իսկ մշակումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | 960 | 2956800 | 3080 | Արգիշտի 1 | 770 | 1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2018 |
| | | | | | | | | | | | | 770 | 2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018 |
| | | | | | | | | | | | | 770 | 3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018 |
| | | | | | | | | | | | | 770 | 4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018 |
| 7 | 15981200 | Հան | Բջնի Լյուքս | ՌՌ Հանք | Հայաստանի | Հանքային ջուր շշալցված 0,33լ | հատ | 150 | 94800 | 632 | Արգիշտի 1 | 158 | 1-ին եռամսյակ՝ մինչև |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | /306 | քային ջուր"Բջնի" 0.33լ ապակյա TALOG | | ային Ջրերի Գործարան ՓԲԸ | Հանրապետություն | տարողությամբ ապակյա շշերում, Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 30-ի N 491-Ն որոշմամբ հաստատված «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | | | | | | | 31.03.2018 |
| | | | | | | | | | | | | 158 | 2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2018 |
| | | | | | | | | | | | | 158 | 3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2018 |
| | | | | | | | | | | | | 158 | 4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018 |

**ԳՆՈՐԴ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

Գ.Ջթրյան ------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍՓԼԵՇ ՈՒ ՈԹԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Գյուլբենկյան փ. 42/6
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500184049140
ՀՎՀՀ 00136902

Ա. Մանուկյան ------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
20 թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/63» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս __________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 2.1
20 թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/63» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________

Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ______________

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________

ազգանուն, անուն

______________________________

Ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________

ազգանուն, անուն

______________________________

ստորագրություն

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «08» Հունվար 2018թ.

<<ՍՓԼԵՇ ՈՒՈԹԵՐ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի, / ID-001007038, տրված 11.01.2013թ., 008 կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
կազմակերպված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/63 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը <<ՍՓԼԵՇ ՈՒՈԹԵՐ >> ՍՊԸ

Ընկերության իրավաբանական հասցե՝ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ Փ. 42/6

Ընկերության բանկի անվանումը՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ

Ընկերության բանկային հաշվեհամարը՝ 11500184049140

Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00136902

Տնօրեն՝ Արմեն Մանուկյան

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ` վճարող)` <<ՍՓԼԵՇ ՈՒՈԹԵՐ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը` <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ >> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը` <<11500184049140>>

6. Վճարողի ՀՎՀՀ` <<00136902>>

7. Վճարողի ՀԾՀ`

8. Շահառու` Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ` 02593108

10. Շահառուի բանկը` Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12. Գումարը թվերով և բառերով` 582600/Հինգ հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր/

13. Արժույթը (բառերով և կոդով)` ՀՀ դրամ (AMD)

14. Գործարքի /վճարման/ նպատակը` *(պայմանագրի կատարման ապահովում)*

15. Պայմանագրի ծածկագիրը` *«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/63»*

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. Կից`--- էջ

| 19.ա. Շահառուի ստորագրությունները | 18.ա. Վճարողի ստորագրությունները` |
|---|---|
| /___________________/ | /___________________/ |
| /___________________/ | /___________________/ |
| 19.բ. Կ.Տ. | 18.բ. Կ.Տ. |

| Կատարված է շահառուի բանկի կողմից | Կատարված է վճարողի բանկի կողմից |
|---|---|
| 20.ա. /___________________/ /ստորագրություն/ | 21.ա. /___________________/ /ստորագրություն/ |
| 20.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |
| "___" ___ 20___թ. | 22.Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |